ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1965 Общественные науки

Վ. Մ. Մարտիրոսյան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

18-րդ դարի առաջին քառորդը առանձնահատուկ տեղ է գրավում Անդրկովկասի ժողովուրդների պատմության մեջ։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ այդ ժողովուրդները ազատագրական պայքարի էին ելել պարսկական բռնապետության և Թուրք նվաճողների դեմ՝ հուսադրված Ռուսաստանից սպասվող ռազմա-քաղաքական օգնությամբ։

18-րդ դարի 20-ական թվականներին Անդրկովկասում ստեղծված իրադրությունը նոր հեռանկարներ է բացում հայ և վրաց ժողովուրդների ազատագրական ջանքերի միավորման համար։ Սեֆյան Պարսկաստանի ծանր լուծը, լեզգիների ավերիչ ասպատակությունները և սուլթանական Թուրքիայի նվաճողական ձգտումները գնալով ավելի էին ծանրացնում ժողովուրդների դրությունը Անդրկովկասում։

Այդ վիճակից դուրս գալու ելքը տեղի ժողովուրդները տեսնում էին զինված պայքարի մեջ, որի ղեկավարները, ուրկա պայմանների թելադրանքով, սկսում էին գիտակցել, որ պայքարն իր նպատակին կարող է հասնել միայն համատեղ ջանքերի շնորհիվ։

Նման ընկալումը հետևանք էր շահերի այն ընդհանրության, որ օբյեկտիվորեն գոյություն ուներ օտար նվաճողների դեմ բախտակից ժողովուրդների մղած պայքարում։ Ահա այս ընդհանրական հողի վրա ծագում և սկսում է սկզբնավորվել համատեղ պայքարի գաղափարը, որի իրականացման ուղղությամբ հետագայում կատարվեցին մի շարք որոշակի քայլեր։

Մյուս կողմից, այդ պայքարը անմիջականորեն առնչվում էր դեպի Անդրկովկաս ռուսական զորքերի առաջխաղացման հետ, առաջխաղացում, որը օբյեկտիվորեն պետք է նպաստեր անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական շարժման հաջող ավարտին։

Անկասկած է և այն, որ հայ և վրաց ժողովուրդների ազատագրական պայքարն իր հերթին նպաստավոր հող էր ստեղծում դեպի մերձկասպյան շրջանները ռուսական զորքերի առաջխաղացման համար։

Պարսկաստանում և Անդրկովկասում տիրող իրադրությունից ցանկանում էր օգտվել նաև սուլթանական Թուրքիան՝ այդ երկրները նվաճելու և կայսրության ծայրագավառի վերածելու նպատակով։

Անդրկովկասի և Պարսկաստանի գրավումը Թուրքիայի կողմից վտանգավոր էր ոչ միայն տեղի ժողովուրդների, այլև Ռուսաստանի հարավ ու հարավարևելյան սահմանների համար։

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏ. ԱԿԱԴ. ԳՐԱԴԱՐԱՆ

Հետագայում, երբ թուրքական ագրեսիան արդեն իրական վտանգ ստեղծեց Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի, բուն պարսկական պետության գոյության, ինչպես նաև Ռուսաստանի մերձկասպյան տիրույթների համար, վերջինս ջանքեր գործադրեց Պարսկաստանին ևս ներգրավելու հակաթուրքական ընդհանուր պայքարի մեջ։

Անդրկովկասյան ժողովուրդների համատեղ պայքարը կազմակերպելու նպատակով որոշակի քայլերի դիմեցին հայկական և վրացական ազատագրական շարժման ղեկավարները՝ Եսայի Հասան-Ջալալյանը, Ավան յուզբաշին, Քարթլիի թագավոր Վախթանգ 6-րդը, Կախեթի թագավոր Կոստանդին 2-րդը, ռուսական կառավարության պատվիրակ Իվան Կարապետը և ուրիշներ։

Եսայի Հասան-Ջալալյանը և Վախթանգ 6-րդը քաղաքական սերտ կապերի մեջ էին ինչպես ռուսական արքունիքի, այնպես էլ ազատագրական շարժման մյուս գործիչների հետ։ Ինչպես վկայում են ժամանակակից պատմիչները և արխիվային վավերագրերը, նրանք հայերի և վրացիների ապստամբությունը նախապատրաստելու և այն նպատակին հասցնելու գործում հանդես են եկել ղեկավարի ու կազմակերպչի դերում։ Ազատագրական շարժման ղեկավարները ոչ միայն հուսադրում և ոգևորում էին հայերին ու վրացիներին ռուսական զորքերի մոտալուտ առաջխաղացումով, այլև միջոցներ էին ձեռք առնում տեղում զինվորական ուժ ստեղծելու, նրանց պարսից հարստահարիչների դեմ պայքարի հանելու ուղղությամբ։ Հայերի ու վրացիների ազատագրական շարժումը սկզբնական շրջանում, նախքան թուրք զավթիչների ներխուժումը, ուղղված էր սեֆյան իշխանության հետ կապված տեղական խանների ու ֆեոդալների, ինչպես նաև լեզգիների ավերիչ ասպատակությունների դեմ։

Ազատագրական շարժումը ղեկավարելու համար սյունյաց մելիքները դիմում են վրացական արքունիքին։ Այդ նպատակով նրանք Վախթանգ 6-րդի մոտ են ուղարկում Ստեփանոս Շահումյանին։ Վախթանգ 6-րդը Հայաստան է ուղարկում Վրաստանում բնակվող և զինվորական գործին լավատեղյակ մի խումբ մարդկանց՝ Դավիթ Բեկի գլխավորությամբ։ Այդ մասին ազատագրական պայքարի անմիջական մասնակից Ստ. Շահումյանը վկայում է. «Արդ ի սոյնպիսի աւուրս դառնութեան սասանութեան Ստեփանոս անուամբ ոմն ի Ներազնեայց ի կողմանցն Կալերու՝ Վանքեցի, խորհուրդ ի մտի դնէր, անցանէր ի Սիսական գաւառ, և երթալ հասանէր յաշխարն Վրաց, ի քաղաքն Մցխեթ առ Շահնաւազ իշխանաց իշխանն Վրաց, և խնդրել ի նմանէ զայր մի տալ երկիրն խափանու ի զորագլուխ, և հրաման տալ նման զորաժողով լինելոյ և զերկիրն ի թշնամեաց պահելոյ»[1]։

Դավիթ Բեկի Սյունիք գալու վերաբերյալ ուշագրավ տեղեկության ենք հանդիպում նաև Զաքարիա նկարչի ձեռագիր ավետարանին կից եղած թիֆլիսահայ Ղուզաննեց Փարսադան բեկի որդի Թաղիի հիշատակարանում, որը կարևոր վկայություն է տալիս նաև Դավիթ Բեկի անհրաժ՝ վերոհիշյալ Փարսադան բեկի և նրա որդիների մասին։

Զաքարիա նկարչի ձեռագիր հիշատակարանի տվյալներից երևում է, որ Ղուզաննեց Փարսադան բեկը ռուսական կողմնորոշում ունեցող մի հեղինակավոր անձնավորություն է եղել Վրաստանում։ Փարսադան բեկի երեք որդի-

1 Հետիր պատմութիւն Դավիթ Բեկին և պատերազմաց Հայոցն Խափանու, որք եղեն ընդդեմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722, և Հայոց 1171, Վաղարշապատ, 1871, էջ 3—4։

ներր զինվորականներ էին, որոնցից երկուսը՝ Թաղին և Ռաֆայելը 1724 թ. Ռեշտում հայ-վրացական էսկադրոնի հրամանատարներից էին, իսկ մյուսը՝ Աբդլմասեհը, իր փեսա Դավիթ Բեկի հետ մեկնել էր Սյունիք՝ հայկական զինվորական ուժերը կազմակերպելու համար։ «...Եւ մեր միւս եղբայր Աբդլմասեհն,— կարդում ենք հիշատակարանում,— որ Վրաստան պարոնի հրամանաւն գնացին տեղն զօրաժողով առնելոյ որ եղբայրս էլ զորապետ էր, որոյ ղլխաւորն էր Ալիխանի որդի Դաւուտ Պէկն, որ է իմ փեսայ որք ընդ պարսից և սսմանցոց բազում պատերազմս ետուն, և ի վախճանի անկան ի մարտին, որ իմ եղբօր դերեզմանն այժմ ի խոտի է, ի Ղափանումն»[2]։

Հայ և վրաց ժողովուրդների համատեղ ազատագրական պայքարը կազմակերպելու ուղղությամբ գործադրված ջանքերը, մի շարք դեպքերում, ունեցան իրենց կոնկրետ արտահայտությունը։ Համատեղ պայքարի փայլուն էջերից մեկը Ագուլիսի մոտ հայ և վրաց զորքերի մղած համատեղ ճակատամարտն էր պարսիկների դեմ։ Այդ մասին Մինաս Վարդապետի գրած հաղորդագրության մեջ ասված է. «Շահի որդին, որը այժմ Թավրիզումն է, չորս խանի զորքով ուղարկեց Ագուլիս՝ հայերի դեմ, ուր հայերը հավաքվել էին և հրամայեց բոլորին կոտորել, հայերը տեղեկացան նրանց գալու մասին, տեղի ունեցավ ճակատամարտ, և խաները մազապուրծ եղած փախան, իսկ մյուսներից շատերին կոտորեցին, և այդ ճակատամարտին կային նաև վրացիներ, որոնք ուղարկված էին Վախտանգի կողմից օգնության համար։

18-րդ դարի առաջին քառորդում ծավալված ազատագրական պայքարում մեծ էր Արցախում (Ղարաբաղում) կազմակերպված հայկական ռազմա-ստրատեգիական միավորումների՝ սղնախների դերը։ Սղնախների շուրջը համախմբվելով, տեղական բնակչությունը հերոսաբար պայքարում էր պարսկական ու թուրքական զավթիչների դեմ։

Սեֆյանների պետության կազմալուծման և անկման ժամանակաշրջանում որոշ հայ մելիքներ սկսեցին ստեղծել և ամրապնդել իրենց զինվորական ուժերը։ 1721—1722 թթ., երբ Դաղստանի ֆեոդալները ասպատակություններ էին կատարում Արցախում, հայ մելիքները, դիմադրելով նրանց, կազմակերպեցին սղնախներ։ Ռուսական արքունիք հղած նամակներից մեկում այդ մասին ասված է. «Ես ծառայից ծառայ, Եսայիս և այրումն Շիրվան անուն և Սարգիս անուն, որ այս երկուքս ի Ջարապերթու են, ես Եսայիս Պարտայու ն մէլիք Յովսեփ ի Դանճայում, միմեանց ձեռ արկաք Ժ (10) և ԺԲՌ (12000) մարդ ժողովեցաք, պատերազմ մտանք կամ թէ յաղկոյ հետ, կամ թէ տանս Ագուանից թուրքաց հետ, ամուր ժայռս քարանց սրգնախ կապեցանք...»[4]։ Այնուհետև, նամուսկի հեղինակները շարունակում են «յաղթութիւն եմք առեալ ի վերայ թուրքաց». այստեղ նկատի են առնված Աղվանից երկրի տեղական այն ֆեոդալները, որոնք Աղվանից աշխարհում պարսկական բռնապետության նեցուկն էին։ Հիշյալ նամակը ուշագրավ է նաև խնդրո առարկա հարցի քննության կապակցությամբ։ Նամակը կարևոր տեղեկություն է պարունակում հայ-վրացական համագործակցության մասին։ Այնտեղ շեշտված է այն օգնությունը, որ ստացել են հայկական սղնախները Վախթանգ 6-րդից, պարսիկների դեմ մղած

2 Տե՛ս «Բանբեր Հայաստանի գիտ. ինստիտուտի», գիրք Ա, Բ, 1921—1922, էջ 136։

3 Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом. СПб., 1898, էջ 347, վավ. 224։

4 Նույն տեղում, էջ 341, վավ. 218։

իրենց պայքարում։ «Եւս Տփխիսու Վախթանկ խանն,—ասված է նամակում,— շատ օգնութիւն էհաս մեզ, անթիւելի որ գրով չէ պատմելոյ...»[5]։

Հայ և վրաց ժողովուրդների մարտական համագործակցության պերճախոս մի վկայություն է 1722 թ. օգոստոսի վերջին դեպի Գանձակ կատարած նրանց համատեղ արշավանքը։ Ինչպես հայտնի է, Պետրոս 1-ի հետ, ըստ նախօրոք կայացած համաձայնության, Վախթանգ 6-րդը հայկական և վրացական զորքով պետք է արշավեր Գանձակ՝ լեզգիների դեմ, և ապա հանդիպեր առաջ շարժվող ռուսական զորքերին։ Դրա համար էլ նույն թվականի ամռանը, Գանձակ գնալու ճանապարհին, Վախթանգ 6-րդը Գանձասարի կաթողիկոս, ազատագրական շարժման ականավոր գործիչ ու ղեկավար Եսայի Հասան-Ջալալյանին ուղարկեց Ղարաբաղ՝ հայկական զորքը Գանձակ բերելու նպատակով։ Եսայի Հասան-Ջալալյանը թողել է հայ և վրաց զորքերի խանդավառ հանդիպման պատկերավոր նկարագրությունը։ «Եւ ի մերձենալ բանակի նորին. ինքն իսկ հրաման արար զորաց իւրոց ընդ առաջ լինիլ մերայնոցն՝ իբրև ողջամբ ընդունելով զնոսա։

Եւ այսպես մեծաւ շքով ի հանդիպիլ միմեանց զօրէն պատերազմի ռազմ կարգեալ ճակատ առ ճակատ, և քաջամարտիկ մանկունք մերոնցն դիմաց, յառաջ խաղացեալ ձախր առեալ քաջընթաց երիվարք, և զինակազմ գրահիւք պարէին հանդիման ճակատուն, և ի ձայնէ հրացանացն որոտայր և թնդար վայրն այն. և փոշեխառն ծուխ նորին, իբրեւ զկայծակնափայլ ամպ արգել զճառագայթս արեգական, մինչ զի զմիմեանս հազիւ տեսանէաք»[6]։

Վրաց-հայկական զորքերի ժամանումը Գանձակ ստիպեց ղաղստանցի ֆեոդալներին փախուստի դիմել։ Գանձակ ժամանելուց հետո Վախթանգ 6-րդը մի հակիրճ, բայց խիստ կարևոր հաղորդում է ուղարկում Պետրոս 1-ին։ Այդ հաղորդման մեջ վառ կերպով արտահայտվել են ոչ միայն հայ-վրացական միասնական պայքարի ձգտումները և այդ առնչությամբ ռուսական զորքերի առաջխաղացման հետ կապված հույսերը, այլև Անդրկովկասում տիրող բարդ իրավիճակի բնութագիրը։ Իր այդ հաղորդման մեջ Վախթանգ 6-րդը գրել է. «...այն, որ մեզ հրամայել էիք գալ և պատերազմել լեզգիների դեմ, եկել ենք և բավական ժամանակ, այստեղ Ղարաբաղում (իմա՝ Գանձակում — Վ. Մ.) ենք։ Ինչքան որ այստեղ լեզգիներ կան, վախից իրենց տներից դուրս չեն գալիս, մի սուլթան կա, այն էլ հաշտություն է խնդրում, սակայն Կախեթի իշխանը, որը մեզ հետ երկպառակություն և թշնամություն ունի, սրան կորավից է լինում, ուզում է, որ մեր ծառայությունը թագավորի մոտ չերևա։ Սակայն, հուսով ենք, որ սրանց ոչինչ չի հաջողվի։ Մենք այսքան ժամանակում Շիրվան էլ եկած կլինեինք, սակայն Ձեզանից հրամանը որ չեկավ, դա է ստիպում մեզ հապաղել։ Արդ, մենք Ձեզ որոշում և ցուցում տալը պատշաճ չենք համարում, սակայն քանի որ այս վայրերին քաջ տեղյակ եմ, դրա համար էլ բացատրում եմ։ Տեղիս համար ուշանալ չի կարելի, որովհետև այստեղի գործերը խառն են և այնպիսի մի բան կարող է ստացվել, որ մեր գործը գլուխ չի գա։ Եթե կայսրը դեռևս գործերով զբաղված է, և նրա այստեղ ժամանելը այդ պատճառով է ուշանում, գեթ այս պետք է նա անի, որ իր զորամասերից Շիրվան ուղարկի, այս կողմից մենք կլինենք, կժողովենք և ողջ գործը աստծով կկարգավորվի, Երև-

5 Նույն տեղում։

6 Եսայի Հասան-Ջալալյան, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 48—49։

վանից սկսած որքան որ ուղեր կա կգրավենք և հուսով ենք, որ Երևանն էլ կգրավենք»[7]։

Հայ-վրացական զորքերի Գանձակ կատարած արշավանքը չհասավ իր նպատակին։ Այդ ժամանակ Պետրոս I-ը զորքով արդեն վերադարձել էր Աստրախան, ուստի և ռուսական զորքի հետ հանդիպումը տեղի չունեցավ։ Սակայն Գանձակից վերադառնալուց հետո հայկական զորքը չցրվեց։ Նա ամրացավ անմատչելի վայրերում և շարունակեց պայքարը։

Ռուսական զորքերի վերադարձը և Թուրքիայի ներխուժումը Անդրկովկաս ծանր իրավիճակ ստեղծեցին ազատագրական պայքարի համար, որի հետևանքով ազատագրական շարժման ղեկավարները ստիպված էին գործել ավելի զգույշ։ Անտեսելով հարցի այդ կողմը, որոշ հեղինակներ ազատագրական շարժման մի շարք գործիչների մեղադրում են ռուսական կողմնորոշում չունենալու և թուրքերին հպատակվելու ցանկության մեջ։ Այսպես, խոսելով աղնախների միջև գոյություն ունեցող երկպառակությունների և տարաձայնությունների մասին, Պ. Հարությունյանը նշում է, որ «Ներսես կաթողիկոսը և նրա եղբայրներ Սարգիս յուզբաշին, Աբրահամ յուզբաշին և Եսային (Գյուլիստան-Ջրաբերդ) մտադիր են եղել հպատակվելու թուրքերին, չեն ունեցել ռուսական օրիենտացիա»[8]։

Սակայն Իվան Կարապետի մի հաղորդումից երևում է, որ Գյուլիստանի յուզբաշիները ոչ թե չեն ունեցել ռուսական կողմնորոշում, այլ պարզապես հարկադրված են եղել ստեղծված ծանր դրության պատճառով որոշ զգուշություն պահպանել, իսկ օրիենտացիայի խնդրում շարունակել են ապավինել ռուսական զինվորական օգնությանը[9]։ Թուրքերին չզրգռելու և նրանց արշավանքի հետ կապված արհավիրքներից զերծ մնալու նկատառումներով են Ներսես կաթողիկոսը և նրա եղբայրները ընտրել ավելի զգույշ վարքագիծ։ Դա պարզ երևում է Ներսես կաթողիկոսի՝ Մելիք Թամրազին ուղարկած նամակից. «Քո թուղթն ինձ հասավ. զամենայն որպիսութիւնտ իմացա(յ)։ Միայն այդ ռուսացտ գալն չենք գիտում թե ինչպես է. այսպես փոքր գալն մեզ օգուտ չկայ, յետուստ, կողմանէ օսմանցիք յեն, հայկական ասկին լաւ չի, մինչև թէ աստուածը այց անէ, որ բազ(մ)այզորք թագավորի գան»[10]։

Այսպիսով, պարզ երևում է, որ Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքները ոչ թե պարսկական կամ թուրքական օրիենտացիա են ունեցել, այլ ստեղծված դրությունից ելնելով՝ զգուշություն են պահպանել, խուսափելով թշնամիների վրեժխնդրությունից։ Գյուլիստանը և Ջրաբերդը խամսայի մելիքությունների հյուսիսային ծայրամասում էին։ Լինելով Գանձակի ու Ղարաբաղի խանությունների անմիջական հարևանը, նրանք ավելի զգույշ քաղաքականություն էին վարում։ Ինչ խոսք, նկարագրվող ժամանակաշրջանում Ղարաբաղում տիրում էին ֆեոդալական հարաբերություններին բնորոշ մասնատվածությունը,

---

[7] М. Броссе, Переписка на иностранных языках грузинских царей с российскими государями от 1639 по 1770 г., СПб., 1861, էջ 142—143։

[8] П. Т. Арутюнян, Освободительное движение арм. народа в первой четверти XVIII в., էջ 228։

[9] Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 156։

[10] Архив внешней политики России, այսուհետև կարճ՝ (АВПР), ֆ. „Сношения России с Арменией", կարճ՝ (СРА), 1739 թ., գործ № 2, թ. 56։

փոխադարձ թշնամանքը և երկպառակության որոշ մոմենտներ։ Սակայն, դրանցով հանդերձ, չի կարելի եզրակացնել, թե մելիքների միջև գոյություն ունեցող երկպառակությունը ազատագրական պայքարի մեջ իրարամերժ օրիենտացիաների առկայության արդյունք էր։ Եթե դա այդպես լիներ, ապա ո՛չ Իվան Կարապետին և ո՛չ էլ Կախեթի թագավոր Կոստանդին 2-ին չէր հաջողվի վերահաս թուրքական ագրեսիային հակադրել ընդհանուր ճակատ կազմած մելիքների ու այլ ֆեոդալների միասնությունը։ Այդ ժամանակաշրջանի ամենագլխավոր և էական հարցում՝ վրացիների և ադրբեջանցիների հետ դաշնակից լինելու, Թուրք պավթիչներին համատեղ ուժերով հակահարված տալու հարցում, սղնախները հանդես էին գալիս միասնաբար։

Անդրկովկասի ժողովուրդների հակաթուրքական ընդհանուր ճակատ ստեղծելու գործում ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Կախեթի թագավոր Կոստանդին 2-րդը։ Իր այդօրինակ գործունեությամբ նա ընդառաջում էր նաև ռուսական կառավարության քաղաքականությանը, քանի որ թեև վերջինս 1724 թ. Թուրքիայի հետ պայմանագիր կնքելուց հետո խուսափում էր Անդրկովկասում ծավալվող իրադարձություններին բացահայտ միջամտելուց, բայց, այսուհանդերձ, իր պատվիրակ Իվան Կարապետին ուղարկում է Անդրկովկաս, հանձնարարելով ստեղծել տեղի ժողովուրդների միասնական հակաթուրքական ճակատ, և դրանով իսկ կասեցնել Թուրքերի առաջխաղացումը դեպի Արևելք։

Անդրկովկասի ժողովուրդները միասնական ուժերով համառ պայքար են մղել թուրք նվաճողների դեմ հենց թուրքական ներխուժման առաջին իսկ օրերից։

Համատեղ պայքարի ցայտուն օրինակ է 1724 թ. Երևանի հերոսամարտը, ուր կողք-կողքի անձնուրաց պայքարել են հայերը, ադրբեջանցիները և վրացիները։

Թուրք պատմիչ Չելեբի Զադեն գրում է, որ թուրքական զորքերին միասնական դիմադրություն են ցույց տվել հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդները։

«Առնված Կրզրլբաշ գերիների տված ցուցմունքից պարզվեց, որ Երևանի ժողովուրդը Գենջեից, Շեմս էլ Դինլիից և Մուհամեդ Կուլի խանից օգնություն են խնդրել, որ Մուհամեդ Կուլի խանը իր հավաքած լեզգի և վրացի զինվորներով կենտրոնացել է Աղչա-Կալայում և մտադիր է Երևանին օգնության գնալ»[11]։

Թուրք պատմիչի այս վկայությունը հաստատող տեղեկության ենք հանդիպում Պետրոս դի Սարգիս Գիլանեցու օրագրում, ուր նշված է. «Օդոստոսի Բ-ումն (2-ին) բ (2) շամախեցի թուրք Թավրիզու շահիցն չափար արեկ Ըռեշտ՝ որ գնայ Թիմիջանայ վէզրին կուշտն։ Էս Բ (2) չափարն ասելան, թէ Վախտանկ խանն և Կախեթու վալի Մամուտ Ղուլի խանն հաշտել ան և միատեղ ուրէնց ասկարովն գնացել ան Յարևան»[12]։

Եվ այդ միասնական պայքարում է՛լ ավելի ամրապնդվեց բախտակից ժողովուրդների՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների բարեկամությունը։ Կոստանդին 2-րդի՝ Իվան Կարապետին գրած նամակից երևում է, որ թուրքերի դեմ հաջող պայքարելու նպատակով միավորվում էին տեղական մասնատված,

11 Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», Երևան, 1961, էջ 139—140։

12 «Կոռնկ հայոց աշխարհին», 2, Թիֆլիս, 1863, № 2, էջ 93։

նույնիսկ նախկինում իրար դեմ պայքարող ուժերը։ Ահա թե ինչ է ասված այդ նամակում. «... դուցե դուք գիտեք այն անհամերաշխության և երկպառակության մասին, որ գոյություն ուներ մեր և Քարթլիի թագավորի միջև։ Այդ անմիաբանությունը առաջներում կար մեր մեջ, բայց այժմ մենք հաշտվել ենք իրար հետ, եղբոր և բարեկամի պես ենք ու պահպանում ենք մեր գլխավոր պարտավորությունը և պայմանագիրը։ Որքան մենք հնարավորություն կունենանք հակահարված տալու Վրաստանի թշնամիներին, մենք չենք գլանա այդ անելուց»[13]։

Մահմեդ Ղուլի խանի (Կոստանդին 2-րդի) եղբոր որդու՝ Մահմադ Միրզայի, որը Գանձակի ջանիշինն էր, Իվան Կարապետին գրած նամակից տեղեկանում ենք, որ համերաշխություն էր կայացվել նաև Ղարաբաղի սղնախների ղեկավարության և Գանձակի ադրբեջանցիների միջև։ Այդ նամակով Մահմադ Միրզան հավաստիացնում է, որ Իվան Կարապետը վստահ կարող է լինել այն բանում, որ գանձակցիները երբեք թուրքերի կողմը չեն անցնի և հավատարիմ կմնան իրենց երդմանը։ Այն հանգամանքը, որ 1724 թ. Գանձակի հայ-ադրբեջանական պայմանագրի կնքմանը ակտիվ մասնակցություն են ունեցել ռուսական պատվիրակ Իվան Կարապետը, Կախեթի թագավոր Կոստանդին 2-րդը և նրա տեղակալ Մահմադ Միրզան, վկայում է այն մասին, որ Անդրկովկասի քաղաքական գործիչները ճիշտ էին կողմնորոշվում ստեղծված բարդ իրադրության մեջ և նպաստում էին տեղական ուժերի համախմբմանը ընդդեմ թուրք նվաճողների։ Դա էլ հենց կազմում էր Իվան Կարապետի առաքելության գլխավոր նպատակը։ Մահմեդ Ղուլի խանի ներկայացուցիչ իշխան Ռուզեպը այդ առթիվ 1724 թ. հունիսի 4-ին հետևյալ հայտարարությունն է արել ռուսական արքունիքում. «Գանձակցիները հայերի հետ մեծ արյունահեղ կռիվներ ունեին, որոնց խանը (իմա՝ Կոստանդին 2-րդը — Վ. Մ.) հաշտեցրեց և նրանց միջև պայմանագիր կնքել տվեց, որպեսզի նրանք երկպառակության կռիվներին վերջ տան և դաշինքի մեջ լինելով թշնամու դեմ անհողդողդ կանգնեն»[14]։ Անշուշտ, այստեղ խոսքը 1724 թ. հայ-ադրբեջանական փոխօգնության պայմանագրի մասին է։ Այդ պայմանագրի կնքումը և նրա բովանդակությունը Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների համատեղ պայքար մղելու անշեղ ձգտման վառ վկայությունն է։

Ինչպես ճիշտ կերպով նկատել է Պ. Հարությունյանը, 1724 թ. հայ-ադրբեջանական պայմանագիրը իր նշանակությամբ ավելի մեծ էր, քան միայն գանձակեցի ֆեոդալների և Ղարաբաղի հայերի մարտական համագործակցությունը[15]։ Դա մի փայլուն փաստաթուղթ է, որ վկայում է թուրք նվաճողների դեմ հայ, ադրբեջանցի և վրացի ժողովուրդների կողմից մղված համատեղ պայքարի մասին։

1724 թ. հայ-ադրբեջանական պայմանագիրը կնքելուց հետո պայքարը թուրք զավթիչների դեմ նոր թափ ստացավ։ Ստեղծված պայմաններից ելնելով, Ղարաբաղի հայկական սղնախների ղեկավարությունը պաշտպանողական պայմանագիր կնքեց նաև պարսկական արքունիքի հետ, որպեսզի հնարավորություն ստանա բոլոր ուժերը կենտրոնացնելու և թուրքերին հակահարված տալու։ Այդ պայմանագրի մասին մենք տեղեկանում ենք Եսայի Հասան-Ջա-

[13] АВПР, ф. „Сношения России с Грузией", 1724, գործ № 1, թ. 2։

[14] Центральный государственный архив древних актов, կարճ՝ (ЦГАДА), ф. «Պետրոս 1-ի կաբինետ», II բաժանմունք, հ. 66, թ. 544։

[15] Պ. Տ. Հարությունյան, նշված աշխատությունը, էջ 176։

լայլանի՝ Վախթանգ 6-րդին գրած նամակից, որը վերջինս 1725 թ. դեկտեմբերի 18-ին հանձնում է ռուսական արքունիքին[16]։

Գանձակցիների հետ դաշն կնքելուց հետո հայկական զորքը ծանր պարտության է մատնել թուրքերին, ոչնչացնելով մոտ հինգ հազար թուրքական զինվոր. հայկական զորքի այդ հաղթանակին հաջորդեց պարսիկների հետ հաշտության կնքումը. «...դարձեալ Փիլիպն գեանջեցոց և մեր թղթովն գնաց շահին մօտն, հիմա Քալպալիպէկն այս բանիս վերայ բերինք մեր մէջս, Ղրղրպաշին հետ հաշտեցինք, այլև մեր մէջս որքան իւռով մարդ կայր թէ մելիքներ, թէ ուզպաշիք ամենն մին եղան պարշեցանք այլև ջոկություն չկայ»[17]։

Հայ-վրացական ուժերը միասնական պայքար են մղում թուրքերի դեմ Լոռի քաղաքը պաշտպանելիս։ Վերոհիշյալ Ռուզեպ իշխանը այդ մասին հավաստում է. «...սահմանի մոտ կա վրացական մի քաղաք Լոռի կոչվող, որի պարետը Մահմադ Ղուլի խանի ստորադրյալն է։ Այդ քաղաքի մոտ թուրքերը շատ օրեր են կանգ առել, սակայն չեն կարողանում գրավել և երեք անգամ թուրքերը պարտություն են կրել այդ քաղաքի բնակիչներից»[18]։

Թուրքերի արշավանքի ընթացքում Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի հիմնական ուժերը ուղղվեցին թուրք զավթիչների դեմ։ Հայերը, վրացիները և ադրբեջանցիները հանդես էին գալիս համատեղ, դրա շնորհիվ նրանց հաջողվում էր մի շարք ծանր հարվածներ հասցնել թշնամուն։ Թուրքական զորքերը, որոնք ձգտում էին կարճ ժամանակում գրավել Գանձակը, Ղարաբաղը, Ղափանը և դուրս գալ Կասպիականի ափերը, հարկադրված եղան երկար ժամանակ գամված մնալ հիշյալ վայրերում և կրել մեծ կորուստներ։ Միևնույն ժամանակ արխիվային վավերագրերից պարզորոշ երևում է, որ Անդրկովկասի ժողովուրդները իրենց պայքարի հաղթանակը տեսնում էին միայն ռուսական օգնական ուժերի Անդրկովկաս գալու մեջ։

Մերձկասպյան մարզերում գտնվող ռուսական զորքերի հրամանատարությունը աչալուրջ կերպով հետևում էր Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին և այդ շրջաններից եկած մարդկանց հարցաքննում և նրանցից ստացած վկայությունները հաղորդում էր արքունիք։ Այդ ցուցմունքները ուշագրավ տեղեկություններ են պարունակում Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների համատեղ պայքարի մասին, ուստի և ավելորդ չենք համարում դրանից որոշ մեջբերումներ կատարել։

1726 թ. հուլիսի 26-ին Շամախից Բաքու վերադարձած Նեֆտալին հետևյալ վկայությունն է տվել ռուսական հրամանատարությանը, շահսեվանցիներից շիա դավանանքին պատկանողները՝ Զալբեկի և Մուրզա Ալիբեկի գլխավորությամբ միացել են հայերի հետ, բնակություն հաստատել Ավան յուզբաշու սղնախում, թվով այդ շահսեվանցիները կլինեն 15.000 ընտանիք։ Տասն օր առաջ Շամախում լուր տարածվեց,— շարունակում է Նեֆտալին,— որ թուրքերը Գանձակից գնացել են սղնախները գրավելու, և ճակատամարտ է տեղի ունեցել, որտեղ շատ թուրքեր են սպանվել։

---

16 АВПР. ф. СРА, д. № 5, л. 30։

17 Г. А. Эзов, նշված աշխատություններ, վավ. 275, էջ 420—421։

18 Նույն տեղում, թ. 545, տե՛ս նաև Ա. Գ. Աբրահամյան, նշված աշխատություններ, էջ 57—59։

Գանձակից 1726 թ. հունիսին Բաքու եկած արարկիրցի վաճառական Զաքարիա Ղազարյանի ռուսական հրամանատարությանը տված ցուցմունքից երևում է, որ սղնախներում թուրքերի դեմ հայերի հետ համատեղ պայքարում էին ոչ միայն ադրբեջանցիները, այլև քրդերը, որոնք թուրքական հարձակումից ահաբեկված՝ հպատակություն են հայտնել հայերին և եկել սղնախները. Ավան յուզբաշին նրանց բնակության տեղ է հատկացրել սղնախներից ոչ հեռու, քրդերը և շահսևանցիները իրենց կրոնի համաձայն երդվել են, որ հայերին հավատարիմ կլինեն և ամեն տեսակի հարկերը կտան կանոնավոր կերպով[19]։

Սակայն, ինչպես ասվեց, ռուսական կառավարությունը, խուսափելով Թուրքիայի հետ ընդհարվելուց, մի բան, որ հղի էր լուրջ բարդություններով, անկարող եղավ ռազմական անմիջական օգնություն ցույց տալու ծավալվող ազատագրական շարժմանը։ Ռուսական կառավարությունը, հավանաբար, չէր կարող անտեսել և այն, որ ռուս-թուրքական հարաբերությունների խնդրում Ռուսաստանի հանդեպ թշնամական դիրք էին բռնել արևմտա-եվրոպական պետությունները[20]։ Եվ, ըստ երևույթին, Թուրքիայի հետ ռազմական բնդհարումից խուսափելու հանգամանքով պետք է բացատրել նաև այն, որ 1726 թ. շահ Թահմազի հետ բանակցելու համար Գիլան ուղարկված Վախթանգ 6-րդին տեղի ռուս գեներալները, կառավարության հրահանգի համաձայն, նույնիսկ արգելում էին նրան որևէ կապի մեջ մտնել հայկական սղնախների և անգամ Վրաստանի հետ[21]։ Թուրքական կառավարությունն էլ իր հերթին պահանջում էր հեռացել Վախթանգ 6-րդին Պարսկաստանից, որպեսզի վերջինս իր գործունեությամբ ու ներկայությամբ չհրահրեր հայերին և վրացիներին՝ շարունակելու պայքարը թուրք նվաճողների դեմ[22]։

Այդ կապակցությամբ գեներալ-ֆելդմարշալ Վ. Վ. Դոլգորուկովը իր 1726 թ. սեպտեմբերի 3-ի զեկուցագրում հաղորդում է, որ «Վախթանգ 6-րդը 1726 թ. օգոստոսի 26-ին ժամանել է Դերբենդ՝ հայերի հետ կապվելու և նրանց ռուսական օգնությամբ հուսագրելու նպատակով, սակայն ես (իմա՝ Վ. Վ. Դոլգորուկովը.— Վ. Մ.) տեսնելով, որ թուրքերը հակված են պարսկական մարզերը, պայմանագրի համաձայն, սահմանազատելուն, առաջարկեցի նորին պայծառափայլությանը (Վախթանգ 6-րդին.— Վ. Մ.), որ հիշյալ հուսադրմամբ հայերի հետ հաղորդակցություն չունենա, որպեսզի դրանով իսկ թուրքերի հետ պայմանագիրը չխախտվի։ Նորին պայծառափայլությունը առանց հայերի հետ բանակցելու մեկնեց Գիլան»[23]։

Անդրկովկասի բախտակից ժողովուրդների՝ թուրք-պարսկական լծից ազատագրվելու երազանքը կարող էր իրականանալ միայն ռուսական զենքի օգնությամբ։ Սակայն, 18-րդ դարի 20-ական թվականներին Ռուսաստանի համար ստեղծված ներքին և միջազգային իրադրության հետևանքով, այն չիրականացավ։

---

19 АВПР. ф. СРП. 1726 թ., գործ № 9, թ. 89բ։
20 АВПР. ф. СРТ. 1723 թ., գործ № 6, մասն I, թթ. 231—232։
21 АВПР. ф. СРП. 1726 թ., գ. № 6, թթ. 33—34։
22 АВПР. ф. СРТ. 1727 թ., գ. № 6, թթ. 223, 252, 258։
23 АВПР. ф. СРП. 1726 թ., գ. № 9, թ. 145։

В. М. Мартиросян

ИЗ ИСТОРИИ СОВМЕСТНОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ НАРОДОВ ЗАКАВКАЗЬЯ

Резюме

В первой четверти XVIII в. народы Закавказья выступили объединенными силами против персидских и турецких поработителей. Этому способствовало продвижение русских войск по побережью Каспийского моря. Борьба народов Закавказья создавала благоприятные условия для действий русской армии. На этой основе возник военно-политический союз между закавказскими народами и Россией, стремившейся к завладению побережьем Каспия.

Вначале освободительное движение армянского и грузинского народов было направлено против местных ханов, которые были оплотом персидского владычества, и совершавших опустошительные набеги лезгинских феодалов, имевших протурецкую ориентацию. С целью успешной борьбы армянские мелики Карабаха и Сюника создали военно-политические союзы—сгнахи, в организации которых деятельное участие приняли католикос Гандзасара Есаи Асан-Джалалян и царь Картли Вахтанг VI.

После вторжения турецких захватчиков в пределы Закавказья и оккупации ими Тбилиси произошла консолидация сил народов Закавказья. К ранее борющимся силам присоединились царь Кахетии Константин II и гянджинские феодалы.

Общими усилиями руководителей освободительного движения был создан единый антитурецкий фронт, созданию которого способствовала деятельность посланца русского правительства Ивана Карапета.

Своей упорной борьбой закавказские народы нанесли ряд серьезных поражений турецкой армии и заставили турецких правителей отказаться от своих планов захвата всего Закавказья.

Однако в силу сложившейся внутренней и внешней обстановки Россия не смогла оказать необходимой помощи закавказским народам, вследствие чего в первой четверти XVIII в. этим народам не удалось освободиться от турецко-персидского ига.